



# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 231537 25.12 2018 թ.

ՖԻԶԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

1. Սեփական դիմումի հիման վրա ֆիզիկայի ֆակուլտետի գիտական խորհրդի կազմից դուրս գալու կապակցությամբ ֆակուլտետի գիտական խորհրդի կազմից հանել օպտիկայի ամբիոնի պրոֆեսոր Համլետ Սուրենի Կարայանին, ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի պատվավոր վարիչ, պրոֆեսոր Դավիթ Մետրի Սեդրակյանին, նույն ամբիոնի պրոֆեսոր Դավիթ Հայրապետի Բաղայանին, պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի ավագ գիտաշխատող Վալերի Սոսի Հարությունյանին, սովորող անդամներ Մելիք Մուշեղի Կարապետյանին, Գրիգոր Իշխանի Հարությունյանին, Վարազդատ Արտեմի Ստեփանյանին:
2. Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմում ընտրովի անդամի կարգավիճակով հաստատել օպտիկայի ամբիոնի դոցենտ Ադավնի Ալբերտի Կուտուզյանին, ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի դոցենտ Համլետ Գուրգենի Բաղայանին, պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի դոցենտ Աննա Լյուդվիգի Ասատրյանին, մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի ասիստենտ Լուսինե Ռաֆիկի Ալոյանին, ընտրովի, սովորող անդամի կարգավիճակով հաստատել Արզունիկ Ատոմի Գևորգյանին, Վարդիթեր Գուրգենի Բեգլարյանին, Լիլիթ Համբարձումի Եգանյանին:
3. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հիմք՝ ֆիզիկայի ֆակուլտետի դեկանի 21/12/2018թ. զեկուցագիրը, ընտրովի անդամների թեկնածության առաջադրման մասին վերոնշյալ ամբիոնների նիստերի արձանագրությունների քաղվածքները, ֆակուլտետի ուսանողական խորհրդի նիստի արձանագրության քաղվածքը:

Ռեկտոր՝

Ա. Ն. Միսնյան